



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

11560

11561

89/99

4-14

Handwritten text at the top of the page, partially obscured.

Handwritten notes on the left side, including the word "300" and other illegible characters.

38

ԱՄՈՒՂ ՊԱՅՏԱՌԷԻ (ՎԱՐՇԱՄ ՏՐԴԱՏԵԱՆՅՑ) ԵՐԳԵՐԸ



ԱՌՈՋԻՆ ՀԱՏՈՐ



Սերուն սոխակ, սերահար,  
Երգում ես անմեխթար.  
Ինչ է, ասա ինձ ցաւդ,  
Կուլաս արդեօք ում համար...  
ՎԱՐՇԱՄ

1008  
36797



ՀԵՂԻՆՍԱԿՆ ՆԻՐՈՒՄ Է ՀԱՅ ԵՈՂՈՎՐԳԻՆ



2013

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Վրաց. Հրատ. Ընկ. || Тш. Грузинск. изд. Т—ва.

1895

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ԿՈՄԻՏԵ

Дозволено цензурою Тифлисъ, 17-го июня 1895 года.

ՎԱՐՇԱՄԻ ՀԱՄԱՌՈՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

**Պայծառէ** Հ. իսկական անունը Վարշամ. ծնուել է 1859 թուականի նոյեմբերի 15-ին Լոռոււմ. մկրտուել է նոյն գաւառի Գիւլաքեարակ գիւղոււմ, Ս. Ստոււածաձին եկեղեցոււմ: Հայրը, Ալէքսանդրապոլցի Մարտիրոս Տրչատեանց, մայրը Շահինեաններից: Վարշամին 7 տարեկան հասակոււմ բերոււմ են Ալէքսանդրապոլ. նա սովորոււմ է դպիր Պետրոս Մանիշեանի (այժմ քահանայ) մօտ: Աչքացաւը արգելք է լինոււմ Վարշամին ուսոււմը շարունակելու. ծնողները տալիս են նրան գերձակուլթեան աշակերտ. մինչև 12 տարեկան դառնալը սովորոււմ է այդ արհեստը, բայց հասակի փոքրութեան պատճառով (որ չէր կարող աւանձին կրպակ բանալ) մնոււմ է դարձեալ վարպետի մօտ: Վարշամի հայրը իւր որդու հետ խիստ բռնի վարվելու պատճառով, Վարշամը գնոււմ է Ախալքալաք որ այնտեղ պարապի իւր արհեստով, բայց երբ լսոււմ է, որ իւր Ախալքալաքոււմ լինելը ծնողներին յայտնի է փախչոււմ է Թիֆլիս: Թիֆլիսոււմ նա երկու տարու չափ մնալով, վերադառնոււմ է Սեծ-Ղարաքիլիսա գիւղը. 3 տարի էլ այդ տեղ է պարապոււմ գերձակուլթեամբ: Դեռ 1876 թուականի վերջերից, երբ Ռուս-Թրքական պատերազմը գեւ նոր էր սկսոււմ, Վարշամի հայրը գնոււմ է Բայաղէդ կամաւոր զինուորուլթեան: Պատերազմի ժամանակ, Վարշամի մայրը իւր ամուսնույ մասին անհանգիստ լինելով և ստացած լուրերին նայելով, հաւատոււմ է, որ իւր ամուսինը սպանուած կամ գերի բռնուած կըլինի: Հէնց այդ ժամանակ նա վշտացած, մի նսմակ է գրոււմ Վարշամին, յայտնելով նրան հօր ցաւալի մահը և իւր

անմխիթար մնալը: Որդին կարգալով մօր ցաւակցական նամակը, չի կարողանում անհետեանք թողնել, ուղղակի թողնում է ամեն բան, և աշխատում է շուտով հասնել, իւր մօր մօտ, մխիթարելու և միասին սգալու իւր հօր մահուան համար: Համարեա մի ամիս չանցած Վարշամի հայր Մարտիրոսը յայտնւում է, որը մի կերպ կարողացել է ազատուել թշնամու հալածանքներից: Շատ չանցած հայր և որդու մէջ ընտանեկան երկպառակութիւնները նորից տեղի են ունենում. Վարշամը չկարողանալով տանել հօր խիստ վարմունքները, նորից ձեռք է առնում պանդխտութեան գաւազանը. գնում է Ռուսաց բանակի յետեից այդ ժամանակ Վարշամը 18 տարեկան էր, հասնում է Ղարս և այնտեղ մի կրպակ վարձելով շարունակում է իւր ընդհատուած գործը (դերձակութիւնը): Ղարսում նրա գործը յաջող ընթացք է ունենում. բանեցնում է մօտ 10—15 բանուորներ:

Մի օր Վարշամը գործարանից իւր բնակարանը վերադառնալիս մի տան դռան առաջ տեսնում է մի օրիորդ. նրանք իրար նայելիս օրիորդը ներս է քաշւում. բայց Վարշամը ջերմ կերպով սիրահարւում է այդ աղջկայ վրայ: Այդ բանը տւում է մի ամբողջ տարի. զարսեցիներից շատերը լսում են այդ բանը, իսկ Վարշամի Ղարսում եղած ազգականները, սրունց մէկի տանը բնակւում էր Վարշամը նա արժան չէ տեսել որ Վարշամը իւր մտադիր օրիորդի հետ ամուսնանայ, օրիորդի հասարակ դասակարգից լինելու պատճառով: Ուստի նրանք, Վարշամից գաղտնի նամակ են գրում Ալէքսանդրապոլ նրա հօրը, ուստա Մարտիրոսին, որ երբ իրանք Վարշամին կ'ուզարկեն Ալէքսանդրապոլ, թող նրան արգելեն: Վարշամը Ղարսից դուրս գալով, հեռեեալ օրը հասնում է Ալէքսանդրապոլ. մտնում է իւրեանց տունը բարևում է և հարցեր առաջարկում ծնողներին, թէ ինչո՞ւ համար են կանչել իրան: Մի քանի ժամ չանցած, յանկարծ Վարշամի միտն է ընկնում իւր սիրուհին և բաժակը թէյով լի առաջը թողած, դուրս է գնում: Հայրը որդու դիտաւորութիւնը հասկանալով, նրա

յետեից ուղարկում է իւր փսքը որդուն Յարութիւնին որ երբ Վարշամին տեսնի, ասէ, «գնանք, քեզ նամակ կայ, ստացիր»:

Վարշամի հայրը անմիջապէս պատրաստում է մի նամակ Գիւլաքեարակ գիւղի տէր Յակովբ Շահինեանի ստորագրութեամբ, որը Վարշամի քեռին էր (մօրեղբայր) իբր թէ տէրտէրը նրան կանչել է իւր մօտ մի հարկաւոր գործի:

Վարշամին իւր եղբայրը Ղարսի ճանապարհից յետ է դարձնում յայտնելով որ «քեզ նամակ է եկել. Վարշամը եղբօր հետ տուն գնալով կարգում է հօր տուած նամակը և տեսնում է որ իւր Գիւլաքեարակ գնալը անհրաժեշտ է, ուստի պատրաստւում է և ճանապարհ ընկնում դէպի Գիւլաքարակ: Վարշամի հայրը հեռագրով իմաց է տալիս տէր Յակովբին, որ ինքը Վարշամին ուղարկում է, թող նրան մի գործով պարապացնեն և արգելեն վերադառնալու:

Վարշամը 6 ամիս մնում է այդ գիւղում խիստ հսկողութեան ներքոյ: Մի օր նա խնդրում է իւր քեռի տէր Յակովբին որ թոյլ տայ գնալ գոնէ Ջալալ-Օղլի այնտեղ դերձակութեամբ պարապելու:

Քահանան, ուրախանում է իւր քրոջ որդու այդ բարի առաջարկութեան վրայ, և մի քանի տասնեակ մանէթ տալով, ճանապարհ է ձգում դէպի Ջալալ-Օղլի, որ շատ հեռու չէ. նրա հետ միասին ուղարկելով, իւր որդի Վահանին, որ հոգայ այնտեղ Վարշամի, արհեստին վերաբերեալ, բոլոր պիտոյքների ծախսերը: Վարշամը այնտեղ էլ մի առժամանակ գործի եղաւ, բայց բոլորովին ջմուռացաւ Ղարսում իւր սիրած օրիորդին, որի սիրուցը և սովորել էր չունգուր ածելը:

Երկու, երեք, օր անցած արդէն միամտացել էին Շահինեանները և առաջուայ պէս խիստ չէին վարւում նրա հետ: Վարշամը, տեսնելով իւր մասնաւոր ազատ լինելը, անտեղից փախչելու հնար էր մտածում:

Մի օր ճաշն անցած Վարշամը, չունգուրը ձեռքն ա-

ուած, ինքն իրան մխիթարելու համար, իջաւ պարտէզ մի քիչ ածելու, երաժշտութեան ձայնից խորասուզուած, նա կորցնում է իւր քայլերի ընթացքը անցնում է պարտեզի ցանկապատը և հասնում է անտառ: Երբ ծառերի խտութիւնը արգելք է լինում նրան առաջ գնալու, Վարշամը նոր է զգում որ շատ հեռացել է. չորս կողմն է նայում տեսնում է որ մարդ չկայ, մտածելով որ լաւ միջոց է փախչելու շտապում է ընկնել ուղիղ ճանապարհը. նա մինչև օրը մութը կոխելը հասնում է Համամլի կայարանը: Գիշերն այնտեղ չէ մնում այլ բարեբախտաբար Ալէքսանդրապոլցի մի ճանապարհորդի պատահելով, նստում է նրա կառքին և հետևեալ օրը մտնում է Ալէքսանդրապոլ: Բոլորովին իւրեանց տունը չհանդիպելով, ընկնում է ճանապարհ դէպի Ղարս: Վերջապէս կէս հետևակ, կէս բարի մարդկանց կառքերով հասնում է Ղարս և թնչ է տեսնում մեր խեղճ սիրահարը. որ իւր սիրուհուն, արգէն նշանել են մի ուրիշ երիտասարդի հետ: Վարշամը մնում է խելագարի նման ման գալով և որքան կարելի է աշխատում է մոռանալ իւր սիրուհուն, որովհետև արգէն բանը բանից անց էր կացել: Բոլորովին յոյսը կտրած, վերջացնում է այդտեղ իւր խանութը, որ առաջ թողել գնացել էր, դուրս է գալիս Ղարսից, և մի քանի երիտասարդների հետ խումբ կազմուելով, անցնում է Տաճկաստան, և ո՞վ գիտէ, էլի ինչո՞ւ, կամ ում վրայ, նրանք սիրահարուելով, գնում են Վան և այնտեղից էլ, մի քանի տեղեր ման գալով, վերադառնում են Ալէքսանդրապոլ:

Երբ Ալէքսանդրապոլում յայտնուում են Վարշամը և իւր ընկերները, մարդիկ հաւաքուում են նրանց գլխին և սկսում են զանազան հարց ու փորձեր առաջարկել նրանց: Սուքեաս Ջահրիեանցը (Աշղ-Խայաթ), որ Վարշամի վաղեմի մտերիմն էր, նրա հետ միասին մտնում են մի սրճարան: Այնտեղ նստած են լինում Ջահրի, Եանգուհի և Հաւէսի աշուղները. որոնք, Վարշամին բարեկեղուց լետոյ, զանազան հացեր են անում նրան. նա էլ իւր գլխի պատահած նշանաւոր անց-

քերը, որ ոտանաւորի ձևով առաջուց պատրաստած է եղել, ասում է: Աշուղները բաւականին հաւանում են Վարշամի տաղանդը և գիտենալով որ նա էլ լաւ ածել գիտէ չունդուրի վրայ, վճռում են մի աշուղական անուն տալ նրան. բայց Վարշամին շատ ցանկալի չէ եղել այդ բանը: Նրանք սկզբում առաջարկում են ըստ սովորականին մի քանի թուրքերէն անուններ, իսկ նա մերժում է ասելով որ ես հայերէն անուն կուզեմ: Աշուղները պնդում են թէ չի կարող պատահել, որ հայերէն անուն լինի: Բայց Խայաթը նկատում է թէ՛ որովհետև մեր Վարշամի խօսքեր պարզ են և պայծառ, թող սրա անունը լինի «Պայծառէ». աշուղները հաւանութիւն են տալիս անուանը Պայծառէ և առաջինները օրհնելով վերջինին, ճանապարհ են ձգում: Պայծառէն: ստանալով «աշուղ» անունը, դուրս է գալիս սրճարանից:

Մինչև 1883 թուականը Պայծառէն պարապում էր դերձակութեամբ (միևնոյն ժամանակ ոտանաւորներ գրելով): Այդ թուականին ամուսնանում է Ալէքսանդրապոլում:

1885 թուականին նա սովորում է թառ ածելը և ըսկսում է պարապել ուղղութեամբ: Նա մինչև հիմա էլ պարապում է Ալէքսանդրապոլում աշուղութեամբ:

Վարշամը իւր երգերի մէջ, իւր Պայծառէ անունը չէ յիշում, ինչպէս սովորական շատ աշուղներ, իրանց աշուղական անունը կը յիշեն, այլ նա իւր իսկական անունն է յիշում, (Վարշամ), միայն երբ պատահում է աշուղական բանակուիլ (Թէքելում), այն ժամանակ աշուղները ստիպուած են լինում աշուղ Պայծառէ ասել, զորօրինակ, մուհամմալի (հանելուկ) տակ նստելիս, կամ ուրիշ մրցումի ժամանակ. երբ իրարու դէմ անպատրաստից ոտանաւորով հարց են առաջարկում երգով ասում են, «որոնէ որ գտնես, աշուղ Պայծառէ», կամ «կորոնեմ կգտնեմ աշուղ Պայծառէ»:

Բայց, թէ ինչու համար երգերու մէջ պայծառէ չէ

յիշում, կամ Պայծառէ անունով չէ վերջացնում, նրա համար  
որ ասում է, Պայծառէ անունը շատ բարձր է իմ արժանա-  
ւորութիւնից, վասն որով Վարշամը իւր իսկական անունը  
է յիշում երգերու մէջ:

Եթէ մի օրու է երգի մէջ կայ Պայծառէ անունը, դա  
ոտանաւորի յարմարութեան, կամ մի այլ բանից ստիպուած  
է եղել որ յիշել է Պայծառ կամ Պայծառէ անունը, մնացած  
բոլոր երգերը յիշում են Վարշամ անունով...

Բաժանորդներից մի քանիսներս շատ ցանկանում էինք,  
Վարշամի պատկերն էլ տպել այս առաջին հատորի մէջ,  
բայց հեղինակը (Վարշամը) բոլորովին չթողեց...



Այսօր, սիրուհիս վարդ, ու մանուշակ, տուեց ինձի,  
Քանզի սիրում էր, իբր յիշատակ, տուեց ինձի.  
Անկեղծ սիրականէր, սիրոյ մուրհակ, տուեց ինձի.  
Ասաւ լեր աշուղ, երգելու ջութակ, տուեց ինձի.  
Դարձեալ, սոխակի սէրը օրինակ, տուեց ինձի.  
Եւ մի սոխակ-Հայաստանի տեսրակ, տուեց ինձի:

Իմ ուրախութեանս չափ ու քանակ չկայ այսօր.  
Որովհետեւ ազնիւ սիրականս տեսայ այսօր.  
Ահա նշանը, տեսնում էք Աստուած վկայ տյսօր  
Ծաղիկների փունջ, սիրուհուցս ստացայ այսօր.  
Սիրականիս հետ խօսալու արժան եղայ այսօր,  
Հետս խօսելով և սիրոյ բաժակ տուեց ինձի...

Ինձ յարգելով, իրան տունը տարաւ սիրականս,  
Անկեղծ սիրոյ, հաստատութիւն արաւ սիրականս.  
Սիրոս ու հոգիս, ինձանից առաւ սիրականս,  
Որ, իւր մօտը պահէ սիրոյ գրաւ սիրականս.  
Վերջը, փոքր ես Պայծառէ, ասաւ սիրականս  
Քանիմ տարի, մեծնալու ժամանակ տուեց ինձի:

\* \* \*

Նազելի կոյս, ով որ տեսնի պատկերդ  
 Նրա սրտում, կարմատանայ քո սէրդ.  
 Նամանաւանդ, հրապուրիչ աչերդ,  
 Նկատողին, անշուշտ կանեն սիրահար,  
 Նա կըլինի, յատուկ աշուղ քեզ համար:

Ո՞ր, մի փափուկ, քնքուշ, սրտին չես տիրել,  
 Ո՞ր մի երիտասարդը, քեզ չէ սիրել.  
 Ո՞ր պատանին, կեանքը քեզ չէ նուիրել,  
 Նկատողին, անշուշտ կանես սիրահար,  
 Նա կըլինի, յատուկ աշուղ, քեզ համար:

Ո՞ւմ մէջ կրակ չէ պատճառել քո ոէրդ.  
 Ո՞ր սիրահարին չէ վառել քո սէրդ.  
 Ո՞ւմ մէջ արդեօք հուր չէ դառել քո սէրդ.  
 Նկատողին, անշուշտ կանես սիրահար,  
 Նա կըլինի, յատուկ աշուղ քեզ համար:

Ի՞նչ արարած, կարսդ է քեզ բնովէ,  
 Ինչպէս սիրտ է, որ քեզանից խռովէ  
 Ո՞ր աշուղը, կրնայ քեզի չըզովէ,  
 Նկատողին, անշուշտ կանես սիրահար.  
 Նա կըլինի, յատուկ աշուղ քեզ համար:

### Ս Ա Մ Մ Ա Յ Ի

Քո սիրով վառուած եմ, ինձի մի տար կրակ, սիրուն կոյս դու,  
 Խնայիր, կրակի տեղը, տու երբեմն խրախույս դու.  
 Չէ որ քո սիրահար բուլբուլը եմ, իմ անթառամբոյսդու  
 Ուրեմն եկ, մտերմացիր ու մի տար ինձանից խոյս դու,  
 Ես, ինչպէս չսիրեմ քեզ, որ տալիսես աշխարհին լոյս դու.  
 Յուսահատ սիրահարիս սրտումը պատճառումես լոյս դու:

Քանի որ քո ծոցումդ, դու ունիս դրախտային պարտէզ,  
 Վասնորոյ տեսնողդ, իրան զոհում է իբր ողջակէզ.  
 Համեմատ քո գեղեցկուլթեան, հագէլես ծիրանի բեհեղ,  
 Օտար իշխանագունք անգամ, սիրով վառուած սիրում  
 Են քեզ,  
 Ես ինչպէս չսիրեմ քեզ որ տալիս են աշխարհին լոյս դու.  
 Յուսահատ սիրահարիս սրտումը պատճառում ես լոյս դու..

Կըսիրեմ քեզի ես անկեղծ, սիրոյ սուրբ լիշատակն ես դու  
 Պապիս, ինձ պատկիրած, քեզ սիրելու յատուկ  
 կտակն ես դու  
 Մեր ազգի բոլորի համար, թէ և մայր, արեգակն ես դու  
 Նազելի, սիրահար Վարշամի, լոյս ու նպատակն ես դու  
 Ես ինչպէս չսիրեմ քեզ, որ տալիս ես աշխարհին լոյս դու.  
 Յուսահատ սիրահարիս սրտումը պատճառումես  
 լոյս դու:



ԴՈՒՔԻՆԻՍ ՄՈՒԽԱՄՄԱՋ...

Ես քնչպէս չսիրեմ քեզ, որ  
Սրտով սիրականս դու ես,  
Նուիրել եմ կեանքս բոլոր  
Քեզ, իմ հոգեհանս դու ես:

Քեզ կըսիրեն, թէ որ կին՝ թէ այլ,  
Քանզի, դու ես ամենին մայր.  
Նամանաւանդ գրախտավայր  
Երկիր, բուրաստանս դու ես:

Ես, ուրիշ սիրական չունիմ,  
Այլոց, գովելու բան չունիմ.  
Բացի քեզ, գովական չունիմ,  
Կեանքս, գովականս դու ես:

Կան մարդիկ, որ ուխտեն արէլ,  
Գնալ խաչերը համբուրել.  
Ի՞նչի հարկաւոր է սուտ ասել,  
Իմ ուխտ ու պայմանս, դու ես,

Սկսբից դու ես եղար պատճառ,  
Որ, ինձ անուանեցին Պայծառ  
Իսկ ես քո զոհնեմ իբրև գառ  
Սրբութեան սեղանս գու ես:

Վարշամիս խնդիրը բոլոր  
Այս է, թէ լինիմ մեղաւոր,  
Քո ձեռքով իբրև դատաւոր  
Դատ արա, իշխանս դու ես:

ԱՆՈՒՇ ՍԻՐԱԿԱՆՍ

Արևելքիցը, մինչի տրւումուտ չկայ քեզ նման, անուշ սիրական,  
Իմ համոզմունքս գոնէ այդպիս է, դու ես աննման անուշ  
սիրական,

Ո՞ր մի ծաղիկը, կարող է լինել այգիքան գովական, անուշ  
սիրական,

Ձեն սիրուն քեզ պէս, ոչ վարդ, ոչ մեխակ, և ոչ պալա-  
սան անուշ սիրական.

Ուրեմն, ինձ էլ քնչ հարկաւոր է, ուրիշ վարդարան, ա-  
նուշ սիրական,

Քանի, որ երկու ծծիդ մէջ տեղն է, գրախտն եղեմեան,  
անուշ սիրական..

Դեռ փոքր էի, ուսումնարանում երբ քեզի տեսա, եզայ  
սիրահար,

Դուրս եկայ փողոց, զեղեցկու թիւնդ պատմեցի աստ,  
անդ, իբրև խելագար,

Հէնց այն օրուանից, դու չես նկատում, որ այրվում եմ,  
ես քեզի համար,

Ոչ, միայն ես եմ և իմ եղբայրքս քո սիրոյդ մէջը չեն  
գտնում դադար.


Ուրեմն, խղճայ երիտասարդիս, մեղք եմ, մի թողնի ինձ,  
անմխիթար,

Իմ, քեզի այսքան սիրահարուելս, հաշու է բաւական, ա-  
նուշ սիրական:

Երգիչ Վարշամ, խնդրում եմ քեզնից, իմ աղաչանքս լուր,  
իմ նազելի

Ի՞նչ է քո միտքդ, քո նպատակդ, ինձ, մի պատասխան  
տուր, իմ նազելի.

Չէ, որ քո սէրդ, իմ մատաղ սրտիս, դառել է անշէջ հուր,  
 իմ նազելի,  
 Սիրուդ կրակով, ես այրվում եմ, հասուր մի կաթիլ  
 ջուր, իմ նազելի.  
 Օգնիր զովանամ, քիչ հանգստանամ, յետոյ թէկուզ առ  
 սուր իմ նազելի,  
 Սրովդ, մորթէ ինձ տանդ մէջը և դիր գերեզման, անո՛ւշ  
 սիրական...



Ի Մ Ե Ր Ս Ձ Ը

Այս գիշեր, իմ երազում տեսածս տեսարանը,  
 էր, իմ պապից մնացած, աւերակ վարդարանը.  
 Որ, պապիս մահից յետոյ, նրա թոյլ պահապանը,  
 Չրկարողացաւ պահել, պաշտելի բուրաստանը.  
 Հէնց, այն օրից սկսած, առջը, գայլը, գազանը,  
 Պարտիզում հաստատեցին, իրանց բնակարանը:  
 Այս գիշեր իմ երազում և այլն...  
 էր իմ պապից մնացած և այլն...



Հետզհետէ, պարտիզի ծաղրկները չորացան,  
 Երգեցիկ սոխակները, օր աւուր ստորացան.  
 Բայց գիշատիչ, անպիտան գազանները, զօրացան.  
 Աճում տուին, բազմացան, ուժ առան, հզօրացան.  
 Ո՛ւմն էր այդ սրբավայրը, բոլորովին մոռացան,  
 Որովհետեւ գազանը, չի զգայ այդքան բանը:  
 Այս գիշեր, իմ երազում և այլն  
 էր իմ պապից մնացած, և այլն..

Վերջապէս, իմ սիրելիք, երազս պատմեմ հիմա,  
 Մեր աւերակ պարտէզը, բարենորոգուած տեսայ.  
 Տեսայ, որ վերոյիշեալ գազանը, այնտեղ չկայ,  
 Ոչ ինքը, ոչ իւր ցեղը, ոչ մէկը չեն երևայ.  
 Սոխակները, երգում են, վարդի թփերու վերայ,  
 Ուզիդ զմայլելի էր, ինձ համար այն վայրկեանը:  
 Այս գիշեր, իմ երազում և այլն...  
 էր իմ պապից մնացած և այլն...

Մինչդեռ նախընթաց օրը, այրվում էի հրկեզում.  
 Տեսայ յանկարծ, եղբարց հետ զովանում եմ պարտիզում.  
 Տեսայ և մի նազելի, պարտիզի ասպարիզում,  
 Ման էր դալիս, պճնուած, մետաքսենում, բէհեզում.  
 Չըգիտեմ ինչպէս ասին, Լոնդոնում, թէ Փարիզում.  
 Պատրաստուել է, պիտի գայ, փեսայացու իշխանը:  
 Այս գիշեր իմ երազում և այլն...  
 Էրիմ պապից մնացած և այլն...

Յանկարծ, իբրև եկել էր փեսացու հօրը,  
 Հրեշտակք պահապան, փաթթել են շորս բոլորը.  
 Կանչել էին հարսանեաց, ընտրեալ Վեհափառ Հօրը,  
 Որ պիտի նա պսակէր հարս ու փեսան այդ օրը.  
 Հանդիսականք գոչէին, կեցէ մեր թագաւորը:  
 Այդպէս ուրախութիւնով մտան Փրկչի ատենը,  
 Այս գիշեր, իմ երազում և այլն...  
 Էր, իմ պապից մնացած և այլն...

Երբ տաճարից զուրս եկան մեր նորապսակները,  
 Նոցա հանդէպ բացուեցան վարդ ու մանուշակները  
 Կրկին լսելի եղաւ ուրախ աղաղակները,  
 Մի կողմից էլ խիստ յուզուած երգում են սոխակները,  
 Փնռք, ի բարձունս Աստուծոյ երգով, հրեշտակները,  
 Տարան, հարս ու փեսային, դէպ իրանց ասպարանը...  
 Այս գիշեր, իմ երազում և այլն...  
 Էր իմ պապից մնացած և այլն...

Ախ, երանի երազս, փսխուէր իրականութեան,  
 Տեսնէիք, թէ էր ինչպէս սքանչելի տեսարան,  
 Լիզուով ասելու բան չէ, ինչպէս բաց ամեն բերան,  
 Կեանքիս մէջ չէի տեսել, այդպիսի հանդիսարան.  
 Պիտի խնդրեմ Արարչից, որ է իշխանց իշխան,  
 Գուցէ ցուլց տայ Վարչամիս, երազի մէկ նշանը..  
 Այս գիշեր իմ երազում և այլն...  
 Էր իմ պապից մնացած և այլն...

1001  
 36797



ԲԱՂՁԱՏԱ ԳԻՒԼԼԵԱՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ..

Ո՛ւր ես արդեօք, ուր ես անուշ սիրական,  
Կարօտդ քաշում, եմ ամէն մի վարկեան,  
Քո սիրով զարկած եմ հասիր օգնութեան,

Տուր սպեղանիս,  
Յաւիս պիտանի,  
Քանի մէկ քանի,

Մնամ Անդարման:

—

Քեզ տեսնելն է միայն իմ ճիգ ու ջանքս,  
Որ սիրոյ խօսքերով բժշկես կեանքս,  
Լսէ իմ խնդիրս ու աղաչանքս.,

Կանչէ քեզի մօտ,  
Խօսենք համառօտ,  
Չմնամ կտրօտ,

Իմ օրը մահւան..

—

Իմ մատաղ հասակում սիրահարուած եմ,  
Խելքով, մտքով, նաև ուշքով տարուած եմ,  
Բնականից քեզի մատաղ գրուած եմ.

Ձեռքովդ փափուկ,  
Մորթէ ինձ ծածուկ,  
Վարշամիս լատուկ,

Ղրկե գերեզման..

—



Ա.Ա. ՍՈՒՍԱԿՆ ՎԱՆԻԱԿՈՒԱԾ

Միրուն սոխակ սիրահար,  
Երգում ես անմխիթար.  
Ինչ է ասա, ինձ ցաւդ,  
Կուլաս արդեօք ո՛ւմ համար:

Անցեալներդ ես յիշում,  
Թէ մի կարօտ ես քաշում,  
Թէ մի զաղտնի սէր ունիս,  
Նրանով ես քեզ մաշում..

Թէ ընկերիդ ես կարօտ,  
Որը գիմայ չէ քո մօտ.  
Թէ վարդին ես կարօտել,  
Կարմիր ու անուշահոտ:

Ձատուել ես սիրականից,  
Քո բնիկ վարդարանից,  
Նրա համար չէ լսվում,  
Մի ուրախ լուր քեզանից:

Ապա, ինչո՞ւ ես տխուր,  
Տես քո Տէրդ միշտ մաքուր  
Պատրաստում է քեզ համար,  
Ախորժալի կերակուր..

Բայց, սոխակը լռել է,  
Երգելուց կարկամել է,  
Ես խօսում եմ, նա տխւո՛ր,  
Իւր շլինքը ծռել է.

Գարձեալ, ասի քեզ մատաղ:  
Տես—թուլթակը միշտ ուրախ,  
Սովորել է սուռ լեզուով,  
Երգել, խօսել, կանչել խաղ..

Իսկ դու, ինչո՞ւ միշտ այդպէս,  
Հառաչանքներ կարձակես.  
Եւ քո սիրուն աչերից,  
Արտասուքներ կթափես..

Ասածս չէս իմանում,  
Ի՞նչո՞ւ չես պատասխանում.  
Ես կուզէի իմանալ,  
Ին՞չ ցաւ. ունիս քեզանում..

Իբրև, սոխակը լսեց  
Խօսքերս, ոտքի կանգնեց.  
Իւր տխրագին երգելովն,  
Ինձ այսպէս պատասխանեց:

Ասաց. «դու միամէտ ես,  
Չըգիտեմ, թէ անմիտես.  
Թէ, իմ սրտիս ցաւերը,  
Բոլորովին չըգիտես..»

«Էտ քնչպէս նկատեցիր,  
Կամ քնդ խղճով դատեցիր.  
Կամ ինձի թուլթակի հետ,  
Ի՞նչպէս համեմատեցիր»:

«Թուլթակը չէ ամաչում,  
Ո՛չ, հայրենիք ճանաչում.  
Ով մի կտոր շաքար տայ,  
Նրա խաղն է կանչում»:

«Բայց ես, ո՞վ իմ բարեկամ,  
Վարդին քնչպէս մոռանամ.  
Ին՞չպէս իմ ազնիւ սիրտս,  
Սոխին ու սխտորին տամ»:

«Տես, կուպիտ կաշաղակը,  
Այն տգեղ, այլանդակը,  
Այգում է անցկացնում,  
Իւր բոլոր ժամանակը»:

Սև ագռաւն էլ, ազատ,  
Ապրում է զերթ պայազատ.  
Իմ հայրենի պարտիզում,  
Բուն է դրել նա հաստատ»:

«Սակայն իմ անխիղճ տէրս,  
Չէ նկատում ցաւերս.  
Վանդակի մէջ պահելով,  
Գաշկանդել է թւերս»:

«Ապա ո՞նց չըմտածեմ,  
Որտեղից ո՛ւր ընկած եմ,  
Բուրաստանից զրկուած,  
Վանդակի մէջ փակուած եմ»:

«Ու՞ր է իմ շինած բունս,  
Ո՞ւր է հայրենի տունս,  
Ո՞ւր է իմ վաղ ունեցած,  
Հռչակաւոր անունս..»:

Ասաց. «Հիմայ իմացար  
 Իմ ցաւերս անհամար.  
 Աշուղ, խնդրում եմ պատմես,  
 Դու շատերուն անդադար»:

Սոխակը վերջացրեց  
 Իւր խօսքերը, ու լռեց  
 Սակայն, Վարչամիս սրտին,  
 Կրկին, նա կրակ դրեց...



Ուղիղն ասած, զարմանում եմ, շատ անգամ,  
 Երբ տեսնում եմ չարչարանքը ժլատի.  
 Ժլատը չի ուզում հաց ուտել անգամ,  
 Փող կիտելն է ճիգ ու ջանքը ժլատի:

Ասի, որ ժլատը չի ուզում ուտել հաց,  
 Դերդաստանին անգամ պահում է քաղցած.  
 Թէ ամօթու հինգ կոպէկ տայ աղքատաց,  
 Սեանում է կերպարանքը ժլատի:

Ժլատ մարդը տարին տասերկու ամիս,  
 Տան համար չի առնի հինգ դրվանքայ միս.  
 Որովհետեւ, ծոմ է, թէ պաս, թէ ուտիս,  
 Քաղցած կանցնի օրն ու կեանքը ժլատի:

Ժլատը չի լսում ոչ մէկի խօսքին,  
 Եթէ չի երևում մէջ տեղը սսկին.  
 Չէ սիրում, ոչ զաւակ և ոչ ամուսին,  
 Ոսկի դեզելն է բաղձանքը ժլատի..

Վարչամ, դու ինչպէս մարդ, աշխատիր հաստատ,  
 Որ օգնես եղբարցդ թշուառ ու աղքատ.  
 Չըմտիկ տաս անխիղճ մարդոցը ժլատ,  
 Որ մեռած է խղճմտանքը ժլատի..

### ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Ո՛հ, փառք այն աւուր, հազար երանի,  
 Երբ դեռ հասակաւ, էի պատանի.  
 Սիրում էին ինձ ամեն արարածք,  
 Սիրում էր նաև կոյսը գեղանի.

Այնժամ բախտաւոր էի,  
 Անվախ ու հզօր էի,  
 Ուժեղ թագաւոր էի,  
 Չասեմ հազար երանի..

Հազար երանի, նրա համար որ,  
 Բախտ էր պատահում ինձ միշտ նորանոր,  
 Պատուիրում էի եղբարցս բոլոր,  
 Որ լինենք բարի, գորբօց պիտանի.

Գործսւմ էի և յաճախ,  
 Ինչպէս իշխան մի անկախ,  
 Սրտիս մէջը չըկար վախ,  
 Երբ ես էի պատանի:

Էի պատանի, սրտով և զուարդ,  
 Գանձարանս լի, ես շքեղագարդ,  
 Ջրօսարանումս հազար տեոակ վարդ,  
 Սոխակներն, այնտեղ եղած ընտանի.

Երգում էին միասին,  
 Ինձ ասելով լալազին.  
 «Վարչամ քեզնից կտանեն  
 Սիրուն կոյսը գեղանի»:

### Ա Ռ Ս Ի Ր Ո Ւ Հ Ի Ն

մուխամագ:

Հողի ջան, լաւ իմանաս, ինձի սիրահար, ես արել,  
 Մինչ հիմայ ցաւս մէկ էր, բայց հիմայ հազար ես արել,  
 Կախարդութեամբ, չգիտեմ, թէ ինչպէս հնար ես արել,  
 Խլել ես խելք ու միտքս, յայտնի խելագար ես արել,  
 Տանջվում եմ, զօր ու գիշեր, ինձի անդադար ես արել:  
 Հողի ջան լաւ իմանաս...

Մինչ հիմայ ցաւս մէկ էր...

Քեզ համար ամէն ըրպէ, սրտիցս հանում եմ հոգոց,  
 Քանի որ պատճառել ես իմ մէջս, հազար ցաւ ու խոց.  
 Ասա խնդրեմ, տուածդ ո՞ր մի կրակը չունի բոց,  
 Ո՞ր մէկը ինձ չի վառե, ո՞ւր գնամ փնտրեմ հովանոց,  
 Եթէ կեանքս, քո սիրոյդ կրակին պաշար ես տրել..  
 Հողի ջան լաւ իմանաս...  
 Մինչ հիմայ...

Տեսածս վարկեանի մէջ, զարկուայ քո սիրով, քեզ մատաղ,  
 Ձարկուած եմ մինչ, հիմայ էլ ման գուգամ արիւնաշողաղ.  
 Խնդրում եմ սպեղանի, չիս լսում խնդիրս, աւաղ.  
 Ի՞նչ է քո նպատակը, ինձի կուզես դնել դագաղ,  
 Չէ որ քո Վարչամն եմ մէթէ սիրտդ քար ես արել:  
 Հողի ջան..  
 Մինչ հիմայ..

ՊԱՆԿՈՒԽՏ ՍԱՍՈՒՆՑՈՒ ԼԱՅԸ ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ...

Ինձ ասում են որ չըլամ, տրտում ու տխուր, *ո՞նց չըլամ.*  
Երբ առայ հայրենիքից բոթալի վատ լուր, *ո՞նց չըլամ.*  
Թշնամիք անգթաբար լքցուել են սուրբ երկիրը,  
Մորթում են Հայ ընտանիք անտեղի ի գուր, *ո՞նց չըլամ:*

Ո՞նց չըլամ, երբ լսում եմ, եղբայրներս քրդերու դէմ,  
Զոհվում են, կռիւ տալով, առանց սուր ու թուր,  
*ո՞նց չըլամ.*

Ո՞նց չըլամ, երբ քրդերը տաճիկներու հետ միացած,  
Գերում են հայ աղջկունք սրբի պէս մաքուր, *ո՞նց չըլամ.*

Ո՞նց չըլամ, երբ լսում եմ, հայ մանկանցը կրակի մէջ,  
Հասցնող չունեն դոնէ, ոչ մի կաթիլ ջուր, *ո՞նց չըլամ.*  
Ո՞նց չըլամ, երբ լսում եմ ամեն հայի կտուրներին,  
Դուրս է ցայտում բոցակէզ անհանգչելի հուր,  
*ո՞նց չըլամ.*

Ո՞նց չըլամ, երբ լսում եմ, հայ գիւղերը բազմաբնակ,  
Եղել են բոլորովին մարդկանցից թափուր, *ո՞նց չըլամ:*  
Ո՞նց չըլամ, իմ սիրելիք, իբրև հայ աշուղ Վարշամս,  
Երբ հայ միտն եղել է քրդին կերակուր, *ո՞նց չըլամ:*

(Բուզեջա եւթ մամլչամի եղանակով.)

Գ Ո Ւ Շ Ա.

Սիրուհին ապրում է վատ,  
Հոգսից ու ցաւից չէ ազատ.  
Ցաւում են և շատերը,  
Որ սիրուհին տրտում է շատ.

Գտիր հնար,  
Ով, սիրահար,  
Քեզի համար  
Նազելին, ապրում է վատ:

Դեռ մանկութեան օրիցս,  
Դուրս չելած օրօրոցիցս,  
Ծիծ տալիս, ինձ ասում էր,  
Այսպէս իմացալ մօրիցս.

Գտի հնար,  
Ով, սիրահար  
Քեզի համար  
Նազելին, տրտում է շատ:



Նստած, մութ սենեակում փակ,  
 Անգամ, չի տեսնում արեգակ.  
 Լաւ գիտես նորայ կեանքը,  
 Ով Վարչամ, երգէ շարունակ.

Գտի հնար,

Ով, սիրահար,

Քեզի համար

Նազելին, ապրում է վատ..



ՈՂԲՆ, ԱԻԵՐԱԿ ՊԱՐՏԵԶԻ:

Խորը Արաքս ես հոսում եմ,  
 Ո՛ւր է, պահապանդ պարտէգ.  
 Չըջրուելուդ ափսոսում եմ,  
 Ո՛ւր է պահապանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ..

Ա.հա, անգուլթ արեգակը,  
 Քո մէջ, լցնում է կրակը.  
 Այրում է մինչ քո յատակը,  
 Ո՛ւր է պահապանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողնլ է քեզ:

Պտղատու ծառդ չորացաւ,  
 Վէհ, անունդ ստորացաւ.  
 Մի՞թէ, բախտը քեզ մոռացաւ,  
 Ո՛ւր է պահապանդ, պարտոց.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ..

Ծաղիկներդ խոնանում են,  
 Վարդերդ, օտարք տանում են.  
 Սոխակներդ վանդակում են,  
 Ո՛ւր է պահապանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ:

Պահապանդ պարտաճանանչ,  
 Տկարացաւ, ով մեծաքանչ.  
 Թառամեց բոյսերդ կանաչ,  
 Ո՞ւր է պահապանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ.

Պահապանդ տկարացաւ,  
 Մէթէ, քո բաղդը կուրացաւ,  
 Անզօր թշնամիդ զօրացաւ,  
 Ո՞ւր է պահապանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ:

Դու մեծաքանչ պարտէգ էիր,  
 Իմ նախնեաց, ասպարէգ էիր.  
 Ծառդ, միշտ կանաչ կուզէիր,  
 Ո՞ւր է պահապանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ:

Չըկար, քեզ նման բուրաստն,  
 Բայց, ծաղիկնզրդ օտարք տարան.  
 Սոխակներդ, ո՞ւր կըկարդան,  
 Ո՞ւր է պահահանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ...

Ինձ, պարտք է թողել քո տերդ,  
 Որ ժողովեմ ծառաներդ.

Նորոգենք, հնացածներդ,  
 Ո՞ւր է պահապանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ.

Վարշամ Տրդատեանձս, մենակ,  
 Քեզ համար ողբում եմ անյաճ.  
 Մինչև երբ մնաս աւերակ,  
 Ո՞ւր է պահապանդ, պարտէգ.  
 Ինչո՞ւ անտէր թողել է քեզ.

Զ Ե Փ Ի Ի Ռ...

Առաւօտեան զեփիւռ, իմ պաղաասանքս,  
Ս զնիւ սիրականիս ասիր, թնչ ասաւ.  
Սիրոյ ասպարիզում փչացաւ կեանք,  
Արգեօք աննմանիս ասիր, ինչ ասաւ:

Գու պատմեցիք, իմ անխնդում մնալս,  
Ս ռանց բերկրանք, առանց ցնծում մնալս,  
Լացս, ողբս, նաև տրտում մնալս,  
Այն ինչ հոգեհանիս ասիր, թնչ ասաւ:

Երբ, որ տեսար սիրականիս զեփիւռ ջան,  
Պատմեցիք անդադար փնտուել իրան.  
Հասկացաւ, որ մինչև ի մահ գերեզման,  
Հաստատեմ պայմանիս, ասիր, թնչ ասաւ:

Ասիք, որ ես իրան սիրում եմ, իրաւ,  
Եւ իւր սէրը մոռանալ, չեմ կարող բնաւ.  
Վարչամս ողջ կեանքով եղել եմ գրաւ,  
Երբ իմ գովականիս ասիր, թնչ ասաւ::

Գ Ի Ի Ա Ն Ի

Հայրենի կայքս, հիմայ սմնից ուզեմ, թնչ ստանամ,  
Տեսնում եմ ոչինչ չըկայ, սմնից ուզեմ, թնչ ստանամ.

Իմ համա դրացիքս, իմ հայրենի մեծ արտերը,  
Ցանում են այժմ նոքա, սմնից ուզեմ թնչ ստանամ:.

Մեր գութանին պատկանեալ գործիքները անգամ խոբը,  
Գրացուս ձեռքը տեսայ, սմնից ուզեմ թնչ ստանամ.

Այն Գեղեցիկ արտը, որ երեք բաժին են կտրատել,  
Տեսնում եմ, սիրտս կուլայ, սմնից ուզեմ, թնչ ստանամ:.

Թաղական իշխանիցը մինչ սենատը զանգաւ արի,  
Ո՛չ մէկը, ինչ չեն գթայ, սմնից ուզեմ, թնչ ստանամ.

Վարչամս, առանցի դատ, կուզեմ ցայնել արտերս իմ,  
Խնդրանօք, ինչ ո՛վ կուտայ, սմնից ուզեմ, թնչ ստանամ:



# ԻՄ ԳԱՆԳԱՏՍ

Սամայի...

Գատիա արգարուլթեամբ, ո՞վ դու, իրաւ արգարադատ  
իշխան,

Տիրեցին թշնամիք կայքս, չունիմ կենդանութեան նշան.

Խելացին բազմաթիւ սենեակներով կալուածքս հայրենի,

Չունիմ հանգստարան ալժամ, չունիմ անգամ, մի ննջարան:

Աղաչում եմ Վեհ իշխանիդ, հայրենի կայքս ինձ յանձնէք,

Թէ, չըտան, ի սէր Աստուծոյ, գոնէ մի սենեակ  
ինձի տան.

Մի փոքր, կայք ու կալուած, թողնելով հայերս թէ  
ես սպրեմ,

Նա էլ անգութ, գոռոզ, թշնամիքս, ինձ չըտեսան արժան.

Ուրեմն, ո՞ւր գնամ գանգատ, կամ ո՞ւմ յայտնեմ  
ցաւերս անբուժ

Կըխնդրեմ, որոշէք առնէք տեղերը Վարչամապատկան:

Մ Ո Ւ Խ Ա Մ Մ Ա Ձ...

Ինչ սրտով, որ սէր չըլինի, և յոյս ու հաւատ չի լինի,  
Այնպէս մարդու համոզմունքը ոչ կամքը հաստատ չի լինի:

Թէ և կաշխատի անդադար,

Բայց անօգուտ, իբրև լիմար.

Քանզի չէ կազմել զսղափար,

Թէ տանջվում է ում համար,

Ոչ ընկերին է բարերար,

Ոչ, բարի գործոց սիրահար.

Այնպէս մարդը, չարչարանքից, պարզ բան է ազատ չի լինի:

—

Ինչ մարդ, աշխարհի երեսին կըլինի անկեղծ սիրահար,

Գուրս կըգայ սիրով ասպարէզ կըկազմէ որոշ գաղափար.

Այն պիտի մարդը, անկարծիք,

Կըգործէ հանապազ բարիք.

Նրան չեն մերձենալ չարիք,

Նա կապրի երկար տարիք

Կըսիրէ ծնողք, հայրենիք,

Կունենայ բարի ընտանիք.

Սիրոյ, յատկութիւն ճանաչող գերդաստանը վատ չի լինի:

—

Տէրը անդադար ասում է, սիրեցէք միմեանց սիրելիք,

Սիրով ամեն մի արարած, կըստանայ երկնքից բարիք.

Ուրեմն, սիրով միանանք

Սիրով, գործ սկսել ջանանք.

Սիրոյ մէջ, երևում է կեանք,

Սէրը, չի պատճառէ տանջանք.

Եկէք, յարգելի ազգականք,  
Անենք, վաստակ ու աշխատանք,

Սիրով աշխատանք անողը, աշխարհում աղքատ չի լինի...

Աղաչում եմ քեզ սիրելիս, ընկերիդ, մի կամենայ վատ,  
Սիրէ, քո կեանքիդ հաւասար, սուրբ գրքի խօսքին համեմատ.

Պէտք է համբերենք իրաբու,

Եղբայր ենք, ներենք իրարու,

Ընծաներ բերենք իրարու,

Սրտով նուիրենք իրարու,

Սքըռթեամբ սիրենք իրարու,

Պաշտպանենք տիրենք իրարու,

Վարշամս, այն ժամ գիտեմ, որ մեր մէջը, գանգատ չի լինի:

Ա՛խ Ի՞նչ Ա՛նե՛Մ ԵՍ

Տրորվում է սիրտս ու տրտում է շատ,

Քուաւ արեգակս, սխ թնչ անեմ ես.

Այրվում է մինչ հոգիս, մրմնջում է շատ,

Անշէջ է կրակս, սխ թնչ անեմ ես:

Ո՛հ ինչքան վատացաւ իմ գրութիւնս,

Եւ ինչպէս աւերուաւ բերկրութեան տունս,

Քանզի գնաց, տարաւ, իմ ցնծութիւնս,

Իմ կենաց մուրհակս, սխ թնչ անեմ ես:

Վարշամս շարունակ, ցերեկ թէ գիշեր,

Կըսպասեմ սիրելոյս գալուն անհամբեր.

Չըգիտեմ, երբ կուգայ իմ աւետարեր

Անմեղ աղանեակս, սխ թնչ անեմ ես:

\*\*\*

Անիրաւ անբախտութիւն,  
Մինչև ի Էրբ ինձ տիրես.  
Մինչև ի Էրբ իմ սրտիս  
Ուրախութիւնն աւերես.

Մինչև ի Էրբ տանջես ինձ,  
Մինչև ի Էրբ, ով անգութ.  
Մինչև ի Էրբ լուսափայլ  
Արեգակս մնայ մութ:

Մինչև ի Էրբ, դու ինձի  
Ոտիդ տակին տրորես,  
Յետոյ դնես, քո տխուր  
Օրորոցումն օրորես:

Մինչև ի Էրբ, ցաւալիս  
Մնամ գառը վիճակում.  
Եւ եղբարքս ինձի ձեռ,  
Այլվեն անշէջ կրակում:

Բաւական է, անիրաւ,  
Ել չեմ կարող համբերել,  
Ել չեմ կարող, քո ինձի  
Տուած ցաւերը տանել:

Որովհետև քո մէջդ,  
Զրկայ երբէք խղճմտանք,  
Ում որ բարեկամանաս,  
Նրան կըտաս տրորանք...

Գնա՛, քիչ էլ նոցա մօտ,  
Որոնք, քեզ չեն ճանաչել.  
Որոնք, երկար տարիներ,  
Դեռ քեզի չեն պատահել...

Իսկ ես, իմ մանկութիւնից,  
Քո հոգիդ ճանաչելեմ.  
Քո ինչ անգութ լինելդ,  
Արդէն, ես հասկացել եմ...

Գէ՛հ, ուրեմն հեռացիր,  
Քեզանից ձանձրացել եմ.  
Այսուհետև, ես պիտի  
Ուրախութիւն վայելեմ:

4-Ն ՓԵՏՐՎԱՐԻ 1893 ԹԻԻ Ի ՍԱՐԻՂԱՄԻՇ

Պարոն Բարգատ Ջալալեանցի նորածին որդոյ  
(Գարեգինի) մկրտութեան հանդիսում:

Փոքրիկ Գարեգին զօրանաս,  
Լինիս, Հայ ազգին հոգատար.  
Օր ըստ օրէ հզօրանաս,  
Լինիս, Հայ ազգին հոգատար:

Ստուռած կեանք տայ և օրհնէ քեզ,  
Որ դու լինիս, խոնարհ ու հեզ.  
Հազնես ծիրանի, նուրբ բէհեզ,  
Լինիս Հայ ազգին հոգատար:

Մեծացիր հոգի աննման,  
Ջալալեանց տոհմ, Բագրատեան.  
Մեծցիր, որ զնաս ճեմարան,  
Լինիս Հայ ազգին հոգատար:

Անթառամ ծաղիկ, կանաչես,  
Վատուրի նից միշտ ամաչես.  
Մեծանաս ազգդ ճանաչես,  
Լինիս Հայ ազգին հոգատար:

Իննսուն և երէք թուին,  
Մկրտուար, փետրուար չորսին,  
Տեսնող հայերը մաղթեցին,  
Լինիս Հայ ազգին հոգատար:

Ստատուր Իսակեանցն այսօր,  
Սրբութեամբ եղաւ քեզ քաւոր.  
Եւ տաճարում խօստացաւ, որ  
Լինիս Հայ ազգին հոգատար:

Գարեգին դրին անունդ,  
Արամի լինի արիւնդ.  
Ճանաչես քո հայութիւնդ,  
Լինիս Հայ ազգին հոգատար:

Ստուռած, քեզ կամենայ վիճակ,  
Որ լինիս բարի օրինակ.  
Իբրև հարազատ Հայ դաւակ,  
Լինիս Հայ ազգին հոգատար:

Մայրդ, կաթ տուած միջոցին,  
Պարտ դնէ քո պարանոցին.  
Երգէ ի մէջ օրօրոցին,  
Լինիս Հայ ազգին հոգատար,

Վարչամս ածելով ջութակ,  
Սյուպէս երգեցի, իմ տատրակ.  
Կըթողնեմ քեզ մօտ լիշատակ,  
Լինիս Հայ ազգին հոգատար:

Ղ Ո Շ Մ Ա Յ

Անունդ չեմ յիշում, սիրուն նազելի,  
 Բայց քեզ ճանաչում եմ, իմ հոգեակն ես.  
 Մէկ պատկերդ ցոյց տուր, քո հիանալի.  
 Որ ինձի լոյս ծագէ, իմ արեգակն ես:

Չեմ սիրել օտարին, ով իմ անշեկ,  
 Չեմ քաղել օտարից, երբէք մի ծաղիկ.  
 Օտարի ծաղիկը, հոտ չունի քաղցրիկ,  
 Իսկ, դու քմքահաճոյ իմ մանուշակն ես:

Խարդախ չեմ սիրոյ մէջ, շատ միամիտ եմ.  
 Աղաչում եմ օգնես ինձ, ծուռը ճիտ եմ.  
 Անդունդ չըտալով, կարծես չըգիտեմ,  
 Գու՛ր Վարդամիս, սիրոյ սուրբ յիշատակն եո:



ԳՈՒՇՍ, ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ

Կոյս, իմ սիրուհին բնական, Աստուած վկայ դու ես.  
 Չունեմ ես ուրիշ սիրական, Աստուած վկայ դու ես.  
 Աշխարհումը մէկ գովական, Աստուած վկայ դու ես.  
 Սէրդ քաշողին հոգեհան, Աստուած վկայ դու ես.  
 Քմքահաճոյ, վարդ ու շուշան, Աստուած վկայ դու ես.  
 Գրախտավայել վարդարան, Աստուած վկայ դու ես:

Պարտիզումը մանուշակը, քեզնից գեղեցիկ չէ.  
 Ոչ քրքումը, ոչ մեխակը, քեզնից գեղեցիկ չէ.  
 Ոչ գիշերային լուսնեակը, քեզնից գեղեցիկ չէ.  
 Ոչ աստղիկը լուսրթակը, քեզնից գեղեցիկ չէ.  
 Ոչ արևը, արուսեակը, քեզնից գեղեցիկ չէ.  
 Չըկայ քեզի համանման, Աստուած վկայ դու ես:

Չէ որ դու ես իսկ պատճառը, ազնիւ սիրական իմ.  
 Որ վառվում է կեանքիս ծառը, ազնիւ սիրական իմ.  
 Թէ կըսիրես Աստծոյ գառը, ազնիւ սիրական իմ.  
 Լից վառ կրակիս ջուր սառը, ազնիւ սիրական իմ.  
 Ապրեցո քո խեղճ Պայծառը, ազնիւ սիրական իմ.  
 Որ Վարդամիս իսկ պահապան, Աստուած վկայ դու ես:





ԳՈՒՇԱ. ԵԱՐ ՍԻՋԱ. ՂՈՆԱՂ ԳԵՍԼԱՋԱՂԱՍԻ  
ԵՂԱՆԱԿՈՎ

Քանի տարի է, տեսել չեմ  
Սիրուհուս, հետը խօսել չեմ.  
Վտղուցէ ձայնը լսել չեմ,

Գնամ բարովեմ սիրականիս,  
Սիրտը վրդովեմ սիրականիս,  
Ես պիտի գովեմ սիրականիս,  
Ո՛չ թէ բնովեմ, սիրականիս.

Ամեն մի վարկետն լիշու՞մ եմ,  
Վասնորոյ, կեանքս մաշու՞մ եմ.  
Նրա կարօտը քաշու՞մ եմ.

Գնամ զարով եմ սիրականիս,  
Սիրտը վրդովեմ սիրականիս,  
Ես պիտի գովեմ սիրականիս,  
Ո՛չ թէ բնովեմ սիրականիս:

Ընտիր է, ամենագեղ է,  
Ինչպէս աղաւնեակ անմեծ է.  
Խնդրեմ ասացէք, ո՞րտեղ է,

Գնամ բարովեմ սիրականիս,  
Սիրտը վրդովեմ սիրականիս,  
Ես պիտի գովեմ սիրականիս,  
Ո՛չ թէ բնովեմ սիրականիս:

Նրանով եղայ սիրահար,  
Որ թափառում եմ անդադար,  
Ճօյց տուէքի ինձ, մի ճանապարհ,

Գնամ բարով եմ սիրականիս,  
Սիրտը վրդովեմ սիրականիս,  
Ես պիտի գովեմ սիրականիս,  
Ո՛չ թէ բնովեմ սիրականիս:

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԶԱՅՆ ՏԱԼԸ, ԻԻՐ ՈՐԿՈՒՆ:

Լոյս է, արդէն առաւօտ է,  
Զարթիր, մի քնիր սիրելիս.  
Արևը ծագելուն մօտ է,  
Զարթիր, մի քնիր սիրելիս:

Զարթիր, բաց արա աչքերդ,  
Աչքերուդ մատաղ, քո մէրդ.  
Վեր կաց շուտ հազիր շորերդ,  
Վեր կաց մի քնիր սիրելիք:

Զարթիր, իմ թիկունք ու թևս.  
Զարթիր, իմ կեանք ու տերևս,  
Եղբարքդ փոքր են դեռևս  
Զարթիր, մի քնիր սիրելիս:

Քարին փոխարինէ բարձդ,  
Օգնիր քո փոքր եղբարցդ,  
Երկնքից կըստանաս վարձդ,  
Զարթիր մի քնիր սիրելիս:

Գնա դու հանդ, հպարտ հպարտ,  
Ցանէ քո հողերդ պարարտ.  
Ձէ, որ ունիս այգի ու արտ,  
Զարթիր, մի քնիր սիրելիս:

Տեսնում ես, մեր դրուժիւնը,  
Ի՞նչպէս կըսանի քո քունը,  
Յիշելով, պապիդ անունը,  
Վերկաց մի քնիր սիրելիս:

Մայրը որդուն էր սպասում.  
Նամանաւանդ խրախուսում.  
Երգելով այսպէս էր ասում,  
Զարթիր մի քնիր սիրելիս:

Վարձամս երբ, որ լսեցի,  
Իսկոյն ձայն տալն սկսեցի  
Եւ իմ եղբարցս, ասեցի  
Զարթիք մի քնիք սիրելիք:



### Գ Ի Ի Ա Ն Ի

Թող մնա իմս ու քուկդ, անդուժ սիրական, թող մնայ.  
 Որ եղար դու իմ մատաղ կեանքիս դաւաճան. թող մնայ.  
 Չեմ մոռանայ, մինչև մահ պետք է լիջեմ ես անդադար.  
 Անդթաբար վարուելդ, անխիղճ հոգեհան. թող մնայ:

Ինչո՞ւ համար, առաջուց սէրդ ինձ արժան դատեցիր.  
 Ինչո՞ւ համար, և սիրոյ պայմանը մեր հաստատեցիր.  
 Ինչո՞ւ վերջն ուրանալով, մինչ թոքերս կտրատեցիր,  
 Թոյ՛ց տալով խղկիդ, թողիր անտեղ ու դարման. թող  
 մնայ.

Լաւ իմանաս, խարդախը չի ունենալ բարի վիճակ,  
 Չի ունենալ խնդուժիւն, գովծով չի լինիլ աջողակ.  
 Նոյնպէս և դու, քո պատիժդ կստանաս մի ժամանակ.  
 Վարչամս, Աստուած ունեմ, կանէ դատաստան. թող մնայ:

### Ո՛վ է ՄԵՂԱՒՈՐ.:

Սիրելիս, ոչ մէկից դու մի նեղենար,  
 Որ քեզ չես պաշտպանում, ո՞վ է մեղաւոր.  
 Ծախսում ես, մսխում ես, միշտ, շրայլաբար,  
 Գործդ, չես ճանաչում, ո՞վ է մեղաւոր:

Ով, որ հետևում է, մշտապէս չարի,  
 Ի հարկէ, իւր ոտը, կրդիպչի քարի.  
 Թէև, խրատ տուողներ ունի բարի,  
 Բայց նրանց չէ լսում, ո՞վ է մեղաւոր:

Այն, որ փողոցներում շրջում է քաղցած,  
 Շորերը կեղտոտած, վաղուց հինացած,  
 Խնդրեմ ասէք, նրան թնջ անէ Աստուած.  
 Ինքը, չի աշխատում, ո՞վ է մեղաւոր:

Տեսնում եմ, անաշխատ ծովը անպիտան,  
 Չէ ուղում աշխատել, անել ոչ մի բան.  
 Այնպէսը ի հարկէ ամեն մի վարկան,  
 Անպատիւ է լինում, ո՞վ է մեղաւոր:

Վարջամ, մտածում ես անյագ անդազար  
 Եւ յուսահատվում ես իբրև մի լիմար.  
 Ապագայ հոգսերդ հոգալու համար  
 Հինգ կոպէք չես պահում, ո՞վ է մեղաւոր:



Հեռացէք ով ամպեր, գնացէք հեռու,  
 Այս մուժ երկրումը, արեգակ, տեսնենք.  
 Ձեր, սև երեսովը, մնացէք հեռու,  
 Գոնէ, մենք էլ, մի պարզ, եղանակ տեսնենք.,,

Դուք, որ մեր երկրին պատճառել էք մուժ,  
 Վասնորոյ մենք գործից չենք քաղում օդուտ.  
 Սրդեօք, մինչ երբ այդպէս դուք լինիք անգուժ,  
 Քաշուէք, մի քիչ մենք էլ ժամանակ տեսնենք...

Սմպեր, ձեր անունը գրենք քնչ տառով,  
 Ձէք արժան, որ լիշենք, Հայի բառբառով.  
 Վարջամս չըգիտեմ, թէ ձեր ատածառով,  
 Մինչ երբ, մեր երկիրը աւերակ տեսնենք...

ԳԱՐՁԵԱԼ ԱՍՈՒՄ ԵՆ ԱՆՀՈԳ ԳԻՒՂԱՑԻ:

Հոգսերից ազատ չեմ, մի ըոպէ մի ժամ,  
Դարձեալ ինձ ասում են, անհոգ գիւղացի.  
Զանազան Հոգսերով մեռած եմ անգամ,  
Դարձեալ ինձ ասում են, անհոգ գիւղացի:

Ես, ինչո՞վ եմ հանգիստ, ինչո՞վ եմ դադար,  
Ինձ, անհոգ են ասում, թի՛չ բանի համար.  
Նկատում են իմ ցաւերս անհամար,  
Դարձեալ ինձ ասում են, անհոգ գիւղացի...

Երբ որ կրգայ գիշեր, կըմտնեմ մահլիճ,  
Բարձս սուր է դառնում, վերմակս դահլիճ.  
Հոգսերս խալթում են ինձ իբրև կարիճ,  
Դարձեալ ինձ ասում են, անհոգ գիւղացի...

Ամեն օր կեանքիս դէմ դաւաճանում են,  
Բռնի, բոլոր աշխատանքս տանում են.  
Հացս, խլում, որդոցս սպանում են,  
Դարձեալ ինձ ասում են, անհոգ գիւղացի...

Խնդրում եմ, ո՞վ իշխանք, լաւ նկատեցէք  
Խեղճ Վարչամիս. արդարութեամբ դատեցէք.  
Իմ հողերս, ինձ վերայ հաստատեցէք  
Յանեմ, ապրիմ չտսեն անհոգ գիւղացի...

ՀԱՆԵԼՈՒԿ, ՏԱՃԿ. ՄՈՒՀԱՄԱՆ.

Մի տեսակ զարմանալի գունդ տեսայ Հայաստանի մէջ,  
Սկսեցի մոտենալ, մտնել նոցա շրջանի մէջ.  
Իբր Հայ հաւատացեալ, Յիսուսի Աստուածութեան,  
Սյդ բանակը անփոփոխ, գտայ աւետարանի մէջ.

Նոցա միջնորդութիւնով Յիսուսը մենք ճանաչում ենք,  
Գտնվում են շարունակ խելացի գերդաստանի մէջ.  
Մէկ միլիոն երեք հազար, վեց հարիւր, վասուն ինն են:  
Բայց կայ մարդ, որ այնքանը պահում է իր գրպանի մէջ:

Նոցա, տաս երկու հազար, հինգ հարիւր, վասուն երկուսը,  
Սէր, միութիւն, պսակ և պատճառողեն տյնքանի մէջ.  
Վարչամս, շատ ճշտութեամբ ցոյց եմ տալիս այս պահուստը,  
Որ կարող էք գտնելու ո՞վ պարոնայք շատ բանի մէջ.

Որ ծառաւին, որ ես սրբեցրի ջուր,  
Իմ ծարաւ միջոցիս, նա տւեց կրակ.  
Նա և ում որ տուի հաց ու կերակուր,  
Թշնամացաւ ինձ հետ, կանգնեց հակառակ:

Ով որ ինձի զիմեց, չխնայեցի,  
Իմ ուժիս չափ, նրա սիրտը շահեցի.  
Եւ կեանքիս հաւասար ում որ պահեցի  
Նա վեր կացաւ, ինձի գցեց ոտքի տակ:

Վարչամս չգիտեմ, թէ սա ինչ բանէ.  
Մի՞թէ լաւին վատ հատուցում արժան է.  
Իմ թշնամիս ինչ որ կուզէ թող անէ,  
Ես, այն կանեմ ինչ արեւ եմ մշտական:

ՀԱՅՐԻԿԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Գիշեր էր, տխուր նստած միայնակ,  
Մտածում էի, երկար ու կարակ.  
Թէ առանց մեր հայր, մենք թնչպէս ապրենք,  
Աստուած իմ, հասիր մեզի օժանդակ.

Եղբայրքս էլ առանձին,  
Քոյրերուս հետ միասին,  
Արտասուելով կասէին,  
Ա՛խ ո՛ր է, մեր Հայրիկը:

Նկարճ երկնքից մի բարի հրեշտակ,  
Յնձուլթեան ձայնով բաձրից աղաղակ.  
Ասաց խնդացէք կգա ձեր հայրիկ,  
Եւ կբարւոզէ ձեր դառը վիճակ.

Մեզի տալով աչքի լոյս,  
Նա պատճառեց կեանք և յոյս.  
Ուրախացիր քոյր իմ կոյս,  
Շուտով կգա Հայրիկը:

Ուրեմն կուգա Հայրիկն իմացանք  
Սիրելի եղբարք, եկէք միանանք.  
Ուրախ երգերով առաջ ընդանտնք,  
Եւ ծաղկունք շաղ տանք, նրա ոտքի տակ.

Որ էլ չենք մնա շուար,

Զենք մնա անմխիթար.

Կպատրաստէ մեզ համար,

Լաւ ապագայ Հայրիկը:

Վարշամ..

Թասնիփ հաւար գիւ, էլ գիւէլի եղանակով

Ո՛ւր է արգեօք սիրականս,  
Որի ձեռին է պայմանս.  
Նա է իմ հանգստարանս,

Սիրահարուած ման եմ գալիս, չի երևում.  
Խելագարուած մանեմ գալիս, չի երևում:

Գեղեցիկ, աղնիւ ցեղ է նա,  
Ամենից էլ, շգեղ է նա.  
Վիրաւոր սրտիս, դեղ է նա,

Վիրաւորուած ման եմ գալիս, չի երևում.  
Խելագարուած ման եմ գալիս, չի երևում:

Գիտեմ, որ տխուր նստած է  
Եւ ինձ համար կը մտածէ.  
Բայց երկինքը ամպամած է,

Ես, մոլորորած ման եմ գալիս, չի երևում.  
Խելագարուած ման եմ գալիս, չի երևում:

Թէ հնար գիտնամ Վարշամս,  
Ել լինչ կմնամ Վարշամս.  
Իսկոյն կզնամ Վարշամս,

Բայց շուարուած ման եմ գալիս, չի  
երևում,  
Խելագարուած ման եմ գալիս, չի ե-  
րևում:



անաղաղ, անաղաղ, անաղաղ  
անաղաղ, անաղաղ, անաղաղ  
անաղաղ, անաղաղ, անաղաղ

Ա Ո Ւ Ե Լ Վ Ա Ծ

Մուխամբազի

Մի օր տեսա դաշտի մէջ, մի քանի գառ անհովիւ,  
Անտէրութեան պատճառաւ, եղել են ցազ ու ցրիւ.  
Այդ գառները, ես գիտեմ, որ վաղ էին բազմաթիւ,  
Ունէին բարի հովիւ, վայելում էին պատիւ,  
Բազմածնունդ հօտ էին աճում էին անհաշիւ,  
Հիմա մնացել էին, մի քանի հատ գառ հազիւ...

Այդ, մի քանի գառին էլ գայլերը շրջապատած,  
Ուղղում են վերջացնել ատամները սրտած.  
Սկսեցին բայելը գառներն իրար խառնուած,  
Ինչ անէին խեղճերը, որ լինէին ազատուած.  
Վերջապէս կրկին անգամ, բառաչելով առ Աստուած,  
Սկսեցին, վայրենի զազաններու հետ կռիւ...

Երբ կռիւը տագացաւ, բարձրացաւ աղաղակը,  
Նկատեցէք, ինչ կէր խեղճ գառներու վիճակը.  
Չունէին մի քաջ հովիւ որ ձեռի դադանակը,  
Խփեր գայլերու գլխին, կամ կուրծքերուն նիզակը.

Յաւաղի տեսարան էր, մայրն ուրացաւ զաւակը,  
Խեղճերն այսպէս են ապրել երկար տարիներ լրիւ:

Գառներու լաց ու կոծը, շատ կենդանիք իմացան,  
Եւ ոչ մէկը խեղճերուն օգնութեան, չըմօտեցան.  
Ողորմելի կենդանեաց փրկութիւն, չըկամեցան,  
Մինչև անգամ ցաւալու փոխանակ ուրախացան.  
Վերջը վագրը, առիւծը, առջը, իբրև գայլացան,  
Ասին, որ պէտք է փրկենք գառներուն միովբանիւ:

Վե՛հ առիւծը, առջին էլ կարծում էր իրան նման,  
Ի՞նչ գիտէր թէ անիրաւ առջը, խափում է իրան.  
Երբ հասկացաւ, որ առջը գայլի հետ ունի պայման,  
Առիւծը վեհանձնաբար, կանգնեց նոցա յանդիման.  
Ասաց, որ արդարութեամբ պէտք է անել դատաստան,  
Պէտք է պատաճել գայլերուն, այստեղից տալով խռիւ:

Գառ ինք, գայլերու ճանկից, իրանց փրկել ջանացին,  
Այսպէս կեանք վայելելուց, լաւ է մեռնել վճռեցին.  
Այս ասելով, գայլերուն բաւական զոհ գնացին,  
Իրանց նախկին թուրից էլ, աւելի քիչ մնացին.  
Բայց, առիւծը գառներուն պէտք է օգնե ասացին,  
Վարշամ, գետին չի ընկնի առիւծի խօսքը ազնիւ:

**Գ Ի Ի Ա Ն Ի**

Ամենակալ, Արարիչ, Աստուած, փոթա ինձ օգնելու,  
Մնացել եմ, ես տարակուսուած, փոթա ինձ օգնելու.  
Ես մեղա քեզ, ներե ինձ ո՛վ զթառատ, երկայնամիտ,  
Ապաւէնս դու ես ողորմած, փութա ինձ օգնելու:

Օր աւուր աւելացան, իմ ցաւերս, տանջանքներս,  
Բաւ է մնամ ոտքի տակ ընկած, փութա իմձ օգնելու.  
Ես չարչար խնդրում եմ, արտասւում եմ, ո՛վ բարերար,  
Գթայ, մի թողնի յուսահատուած, փութա ինձ օգնելու:

Հանապազ, ա՛խ քաշելով, մինչ թոքերս կտրատուել են,  
Մինչի երբ մնամ վիրաւորուած, փութա ինձ օգնելու.  
Բաց արա ողորմութեանդ դռները ճէր, բաց արա,  
Վարշամիս մի թողնի մոլորուած, փութա ինձ օգնելու:

**Գ Ո Ի Շ Ա...**

Սիրուն նագելի, ո՛վ որ լինի քեզ սիրահար,  
Նրա սրտի մէջ, բորբոքում է հուր անդադար.  
Գիտես, որ զոհուան քանի սիրահարք քո մասին,  
Գարձեալ զոհվում են և սպանվում են անհամար.

Ա՛խ, գիտենաս երանի,  
Ո՛րքան ծէր և պատանի,  
Ենթարկուան կախաղանի...

Ինձ էլ, կախողան թէ բարձրացնեն չեմ տրտում,  
Բայց, եթէ թողնեն հոգիս աւանդեմ, քո գրկում.  
Քանի որ սէրդ, արմատացել է, իմ սրտում,  
Ուրեմն առանց քեզ, իմ արեգակս է խաւար:

Ա՛խ պիտի գա՞ ժամանակ,  
Որ մեզ ծագէ արեգակ,  
Զրմանք սև ամպի տակ...

Ա՛խ, պիտի լինի՛, այնպիսի մի օր նազելի,  
 Ո՞ր, սիրահարդ քո, լինի հզօր նազելի.  
 Դու, հարս կանգնելի, փեսատ թագաւոր, նազելի,  
 Վարչամիս բոլոր խնդիրը, այս է քեզ համար.

Ա՛խ նազելի աննման,  
 Տէսոյդ լինէի արժան,  
 Դեռ չըմտած գերեզման:

ԴՈՒԲԵՒՏ ՄՈՒԽԱՄԲԱԶ

Հայ տղայ, լուր աղաղակ,  
 Ահա անդադար կաղաչեմ.  
 Քեզ յայտնի է նախատակ,  
 Թէ ինչո՞ւ համար կաղաչեմ:

Քեզ չեմ մոռանալ ոչ մի ժամ,  
 Ո՞վ իմ հարազատ բարեկամ.  
 Հասիր շուտով արա խնամ,  
 Իբրև բարերար. կաղաչեմ:

Ինչ մի թողնի խաւարի տակ,  
 Ծագեա մի լոյս իմ արեգակ.  
 Ել մի կորցնի ժամանակ,  
 Ազնիւ սիրահար կաղաչեմ:

Աւելանում է տանջանքս,  
 Շատանում է տառապանքս.  
 Մահից փրկելու իմ կեանքս,  
 Գտի մի հնար կաղաչեմ:

Խորհուրդս, եղբորդ խօսիր,  
 Փռլթա ինձ օգնելու հասիր.  
 Հասիր շուտով, մի սպասիր,  
 Մի թողնի շուար կաղաչեմ:

Ձէ որ իմացար համբաւս,  
 Թէ որքան սաստիկ է ցաւս.  
 Ծովի ալիքներից, նաւս,  
 Փրկե ղեկավար, կաղաչեմ:

Վատանում է դրուժիւնս,  
 Պակասում է զօրութիւնս.  
 Հասիր, որ կարողութիւնս,  
 Ձրտիրէ օտար, կաղաչեմ:

Արի ձեռդ տուր, Վարչամին  
 Օգնութիւն հասուր Վարչամին.  
 Մի թողնի տխուր Վարչամին,  
 Եղիր օգտակար, կաղաչեմ:



Դ Ա Ս Ի Թ Ա Հ

Առատաձեռ մարդն ու ժլատ հարուստը,  
 Վիճում էին կանգնած իրար յանդիման.  
 Նկարագրելով միմեանց ապրուստը,  
 Հանում էին գաղտնիքները երևան.



Նախ և առաջ խօսեց հարուստը ժլատ,  
 Նկատելով, խեղճը այն մարդու առատ.  
 Ասաց, Աոտուած ստեղծել է քեզ աղքատ,  
 Ձեռ յասկանում ոսկու յարգը պատուական:



Առատն ասաց, լիմար, բարի անունը,  
 Մարդու գործն է ոչ թէ հարստութիւնը.  
 Բացի լաւութիւնը, ազնւութիւնը,  
 Ի՞նչ ունինք աշխարհում մեզի սեփական:



Ժլատ հարուստն ասաց, քնչ բարի անուն,  
 Ի՞նչ առազինութիւն քնչ ազնւութիւն.  
 Հազարաւորք մեռնին մինչև իրիկուն,  
 Ոչ մի կապեկ չեմ տալ նրանց փրկութեան:



Առատաձեռն ասաց, քնչ է տանջանքդ,  
էլ ինչո՞ւ համար է քո ճիգ ու ջանքդ.  
Կամ թէ քնչ է նպատակդ, բաղձանքդ,  
Ասա, իբրև կատարեալ մարդ բանական:

ժլատ հարուստն ասաց, միշտ և հարստեամ,  
Արծաթին ու ոսկուն ես կանեմ խնամ.  
Որովհետև ոսկին է ինձ բարեկամ,  
Որ նեղ օրս ինձ կըհասնի օգնութեան:

Առատաձեռն աւաց, աշխարհն ընդհանուր,  
Քեզ վերայ թափում են հազար թուք ու մուր.  
Գերդաստանդ, ցամաք, առանց կերակուր,  
Դու էլ քաղցած ման ես զալի մշտական:

ժլատ հարուստն ասաց, հաստատամիտ չեմ,  
Աշխատելով ոսկի արծաթ կըկիտեմ.  
Քեզի նման շուայրութիւն չըգիտեմ,  
Շուայրութեամբ մարդ կըլինի մուրացիկան:

Առատաձեռն ասաց, ո՞վ ժլատ հարուստ,  
Ոչ խաղաղ կեանք ունիս, ոչ մաքուր ապրուստ.  
Ոչ կրտսենեմ, ես քո հագիդ նոր հագուստ,  
Մինչ կոշիկդ ունի քսան կարկատան:

ժլատ հարուստն ասաց, ով որ առատ է,  
Թէ և կըհազնուի, սակայն աղքատ է.  
Բայց իմ փողս, ոսկիս, արծաթս, շատ է,  
Երբ ուզենամ այն ժամ կանեմ պատմուճան:

Առատաձեռն ասաց, անխիղճ, անհոգի,  
Քո մէջ բնակուել է սատանի ոգի.  
Մի օր Բէլիարը բզիդ կըչոգի,  
Կսրուստդ կըլինի լաւիտենական:

ժլատն ասաց, բաւ է խօսես այլ և այլ,  
Բէլիարին բաժին դու ես ո՞վ շուայր.  
Բաւական է ինձի ատես սոված գայլ,  
Ինձ քանի մէկ անուններ տաս ածական:

Առատաձեռն ասաց, խիղճ չունիս բնաւ,  
Ողջ կեանքով եղել ես սատանին գրաւ.  
էլ ինչո՞ւ պէտք կըգաս ո՞վ դու անիրաւ,  
Ոչ ընկեր ես սիրում և ոչ հարևան:

ժլատ հարուստն ասաց, իմ հարևանը,  
Երբ գոհեց ինձ համար իր դահեկանը.  
Կամ երբ բացեց ինձ համար իւր սեղանը,  
Ես իբրև հարուստ մարդ մթթէ չէր արժան:

Առատաձեռն ասաց, դ՞ու ես սպասում,  
Դարձեալ այն խեղճերից օգնութիւն խնդրում.  
Դու հարուստ ես, նրանց դ՞ու օգնե դղում,  
Նրանք խեղճ են նաև չունեն օգնական:

ժլատն ասաց, դու ես դղումը, լիմարը,  
Փողդ այլոց տուող գերթ խելագարը.  
Ես փող չեմ տա, թէկուզ մեռնեն հազարը,  
Մինչ եղբորս էլ, եթէ հանեն կախաղան:

Առատաձեռն ասաց, դու միշտ ատում ես,  
Բարեսիրտ մարդկանցը, և նախատում ես.  
Ի՞նչ, որ այդքան ոսկի, փող, աշխատում ես,  
Ի՞նչու բարի գործ չես անում, անպիտան:

Ժլատ հարուստն ասաց, քնչեր ես ասում,  
Ի՞նչ բարեգործութիւն, ես չեմ հասկանում,  
Իմ փողերս ես կըսպահեմ, ինձանում,  
Ինչի նման ոչ ոք չունի գանձարան:

Առատաձեռն ասաց, խեղճերուն հասիր,  
Որ քեզ մարդ, անուանեն կատարեալ ըրտիր.  
Խեղճ մանկանց և որբոց վերառ ուղեգիր,  
Իբրև բարերար մարդ, ուղարկէ ուսման:

Ժլատ հարուստն ասաց, թող ինձ վատ ասեն,  
Թէկուզ Բէլեարի հպատակ դասեն,  
Թէկուզ գեշ անուանեն թէկուզ բամբասեն,  
Ես, չեմ սիրում ուսում, ոչ ուսումնարան.

Առատաձեռն ասաց, ժլատին, լիմար,  
Մարդը պէտք է լինի մարդուն բարերար.  
Ել այդ փողը, հաւաքում ես ո՞ւմ համար,  
Որ դու պէտք է հողը մտնես աննշան:

Ժլատը, բարկացած ասաց, քանի մէկ  
Ձահլէս տանիք, ինչպէս մէկը կար երեկ.  
Ես, բաց աչքով մարդու չեմ տալ մի կոպեկ,  
Բաւ է գլխիս կարգաք գալլի շարական:

Առատաձեռն ասաց, թո՛ւ, քո երեսին,  
Թո՛ւ, քո զաւակներուն, տանդ տնտեսին,  
Թո՛ւ, քո յիշատակին և քեզի պէսին,  
Ասաց ու ընթացաւ դէպի օթեան:

Երբ ժլատ հարուստը միայնակ մնաց,  
Սկսեց մտածել սաստիկ չարացած.  
Ձայրանալով, լաւ է մեռնելը ասաց,  
Եւ սպանեց հրացանով ինքն իրան:

Վարշամ, ժլատները վատեն շարունակ,  
Որովհետև չունին բարի նպատակ.  
Բարի մարդիքն ունին անմահ յիշատակ,  
Բարեգործն է, որ կըլիշուի յաւիտեան:



ԳՈՎԵՍՏ, Ի ՎԵՐԱՅ ԳԵՐԱՊՍՏԻ Ի Ա. ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

Մուխամբազ

Կեցէ ով դու Հայ իշխան միշտ բարեգործութիւնով.  
բախտով: Երջանկութիւնով, հռչակաւոր տնունով.

Աշխարհում, ինչ արարած, որ լուծ է անունդ,  
Օրհնում են կեանք մաղթելով, գովում են բնութիւնդ.  
Գովում են նամանաւանդ, հայրենասիրութիւնդ,  
Առատաձեռ լինելդ, ախքատաց օգնութիւնդ,  
Բարեմաղթենք արարչից, չքփոխուի դրութիւնդ,  
Որ միշտ օգնես դու մարդկանց քո լուրջ դատողութիւնով.  
Կեցես և այլն...  
Բախտով և այլն...

ձշմարիտ, ազգասէր ես և ոչ միակողմանի,  
Հայութիւնը ճանչող, Հայ ազգութեան պիտանի,  
Շնորհալի և բարի, գովասանքի արժանի,  
Քեզ պէս բարի իշխաններ շատ ունենանք երանի.  
Որ օգնում ես, թէ խեղճի, թէ թշուառ հարևանի,  
Թէ օտարի, քո ազնիւ շրջահայացութիւնով:  
Կեցես և այլն...  
Բախտով և այլն...

Պու, բարի օրինակ ես, ինչպէս, որ նշանակուիս,  
Այնպէս էլ, բարի որդիք, բարի գերզատան ունիս.  
Միշտ, կամաչէ թշնամին, եթէ ախոյեան ունիս,  
Որովհետև Փրկչի պէս, տէր ու պահապան ունիս.  
Հայր Աբրահամի նման, լի, առատ սեղան ունիս,  
Վայելում ես սեղանդ շարունակ բազմութիւնով:  
Կեցես և այլն...  
Բախտով և այլն...

Կովկասի մէջ անուանի, երևելի, մի հատ ես,  
Որովհետև, մարդկութեան պայմանի մէջ հաստատես.  
Խելքով, գիտուն, և բարի, բնութիւնով անհատ ես,  
Գեղեցկութեամբ, գեղեցիկ Յովսէփին համեմատ ես.  
Ողջ աշխարհին յայանի է, որ յատուկ պայազատ ես,  
Ծագումով իշխանագն անարատ ես արիւնով:  
Կեցես և այլն...  
Բախտով և այլն...

Քեզ պէս, մարդասիրական գաղաբարով մեծացած.  
Քեզ պէս, ազգասիրական հոգով դաստիարակուած,  
Փեզ պէս, օգնող մարդկութեան, քեզ պէս բարի, ողորմած,  
Քեզ կըճարուի, քեզ նման անկեղծ, ընտիր, արած.  
Ուրեմն, պարտական եմ Վարչամս բազկատարած,  
Կեանք մաղթելու քեզ համար, իմ երգեցողութիւնով:  
Կեցես և այլն...  
Բախտով և այլն...

ՍՍ.ՆԹՐԱՃ (ՍՂԻԻՍՍ.ԿՍ.ՁԵԻ) ԴԻԻԱՆԻ:

Սիրուհի, թէ անունդ տամ, զաւաճանք, ինձ թակում են,  
Անունդ տամ զաւաճանք, ինձ թակում են մտրակում են.  
Դաւաճանք, ինձ թակում են մտրակում են և փշերով,  
Թակում են մտրակում են և փշերով պսակում են.

Թէ իմանան, որ յատուկ ես, սիրահարուած էակ եմ,  
Որ յատուկ ես, սիրահարուած էակ եմ քեզ փափակեմ,  
Սիրահարուած էակ եմ քեզ փափակեմ և սոխակ եմ,  
էակ եմ, քեզ փափակեմ և սոխակ եմ, վտնդակում են:

Ի՞նչ անեմ բաս, եկ Վարշամիս, ասա ո՞վ իմ հոգեակ,  
Եկ, Վարշամիս ասա, ով իմ հոգեակ, իմ աղաւնեակ.  
Ասա, ով իմ հոգեակ իմ աղաւնեակ երբ շարունակ.  
Հոգեակ իմ աղաւնեակ երբ շարունակ ապտակում են:

Թ Լ Ի Կ Լ Ե Ձ Ո Ի Ո Վ:

Բարի, նպատատով սիրահարուողը,  
Միտ տըթասե սիրատանի փափատը.  
Նաև, սիրատանին դովասանող,  
Պիտի երգե, ինց պէս սիրուն սոխատը:

Ինց մարդ, անտեղծ սիրով սիրահար տլի,  
Սիրոյ տորանթին, նա օզար տլի.  
Նրա ցնծութիւնը. աննտար տլի,  
Ըստանալուս, սիրատանի նամատը:

Ինց մարդ ցէ սիրահար, ցէ ընտիր էատ,  
Որովհետև, ցունի բարի նպատատ.  
Բայց Վարսամս, ալրվում եմ սարունատ,  
Ինձ ալրողը է, իմ սիրոյ տրատը:

Վարշամ



Մ Ո Ւ Խ Ա Մ Բ Ա Ջ

Թիֆլիսում պատահեցին, մի քանի հայ պատանիք  
Իբր մենք հայ երգիչներ, մեզի տարան հարսանիք:

Պատանեաց հետ գնալով ուղիղ հարսանեաց տունը,  
Սկսեցինք ածելը քայլեց ուրախութիւնը.  
Ինչպէս նկարագրեմ պատանեաց ցնծութիւնը,  
Որ յաճախ կրկնում էին, կեցէ հայ ազգութիւնը.  
Անկարծ եկտւ մի մեծ մարդ, որ չըզիտեմ անունը,  
Ասաց, ապա ձեզ տեսնիմ մի լաւ մտաշուլաթ կոնիք:  
Թիֆլիսում և այլն...  
Իբր մենք հայ և այլն...

Մօտիկ գալով և տիկին, մէկին ասաց, Գաղէբ ջան,  
Գանա սաղանդարեբի քարթուլ սիմդերաս, վեր իտղվիան.  
Գաղեբն ասաց, մարթլա շեն տուտուցի խար Մարիան,  
Կույիս աշուղեբի, քարթուլաթ ըն իցիան,  
Մարիան ասաց, մաշ, սուլա էգ արթն ան Նայաստան,  
Ծաղր էր անում հայ լեզուին. այ քեզ հայի ընտանիք:  
Թիֆլիսում և այլն...  
Իբրև մենք հայ և այլն...

Գալով էլի մի այլ կին, մեզ պատուիրեց լեզկինկա,  
Ղնկերուհուն կանչելով ասաց, իթամաշէ Լիզա.  
Լիզան չուզեց լեզկինկա, կուզէր պարել մազուրկա,  
Որոնում էր որ ընտրե հմուտ ապրող մէկ տղայ.  
Տղայք կարթէին խաղում տեսաւ կաւալիբ չըկայ,  
Իրան անբախտ համարեց օրիորդը, անկարծիք:  
Թիֆլիսում և այլն...  
Իբր մենք հայ և այլն...

Երբ կարտը վերջացրին մէկը ճվաց, զասպաղան,  
Տէպեր նաղա տանցաւաղ կաղրել, պարել ո՞վ գիղա.  
Բայց մի քնքոյշ օրիորդ ասաց, կաղրել նինաղա,  
Մէ կաղրելս վեր ավ թամաշոբ քարթուլի սաթամաշո մինդա.  
Վուր էհենց է, ասացին, էս էլ մի դարդիման դա,  
Ուստէք, լեկուրի ածէք, իժում կաղրել կուածիք:  
Թիֆլիսում և այլն...  
Իբր մենք հայ...

Պարից ետոյ մէկն ասաց, չարգահ ածէք ուստա ջան,  
Եւ սկսեց երգելը, էլ է դէլէ լէլէլ ջան իման.  
Ջան իման բառից ետոյ, ինչ որ ասաց աննշան,  
Որովհետեւ խօսքերը, ոչ մի լեզուի չէր նման.  
Ժամանակը հասել էր, պատրաստել էին սեղան  
Երգողը հեռանալով ասաց, վո՛ւնց է, հաւանքիք:  
Թիֆլիսում և այլն...  
Իբր մենք հայ և այլն...

Արդեօք թնչը կըստիպէ, որ հայի հանդիսատան,  
Եւ հիւրերը բոլոր հայ, խօսին լեզուով զանաղան.

Զօրօրինակ բարև ձեզ, գագի մարջոթ, դու Շուշան,  
Մթթե այդպէս բաները անպատվութեան չէ նշան.  
Ես, Վարշամս Շարունակ և մինչի մահ գերեզաման,  
Պիտի երգեմ հայ լեզուով, պիտի գովեմ հայրենիք:  
Թիֆլիսում և այլն...  
Իբր մենք հայ և այլն...

---

Գնա գրգոյլ գնա շուտով, էլ մի սպասիր  
Ուղարկում եմ քեզի բարով, գնա շուտու տեղ հասիր.  
Ով բաց անե քեզի սիրով, այնտեղ պատմէ ու խօսիր,  
Յայտնիր նոցա, որ եղբայրդ շուտով կելնեն ատպարէդ.  
Եւ կըհասնի քո ետեից, նա չի թողնի մենակ քեզ:  
Վարշամ

---

ԻՐ ՎԵՐՋԱՐԱՆ, ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԳԵՐԱՊԱՏԻ  
ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ:

Գրգռյկս նուիրում եմ ձեզ ազնիւ ընթերցողներ, ձգե-  
լով ձեր անաչառ հայեցողութեան առաջ, խնդրում ներողու-  
թիւն իբրև ժողովրդական աշուղի. այսքան:

Երկրորդ հատորը պատրաստ է տպագրութեան և ի  
հարկէ սրանից աւելի մեծ, մօտաւորապէս 150 երգ կունե-  
նայ, միայն սպասում ենք սրա սպառելուն, որ մտադիր ենք  
սրա երկրորդ տպագրութեան հետ երկրորդ հատորը միասին  
լոյս ընծայել և յոյս ունինք որ կըյաջողուի:

Այս երգարանի հրատարակութեան, առաջին պատճառը եղան, Զորագիւղացի եղբարք Յարութիւն և Սհակ Մն. Սհակեանցները, որոնք հեղինակին օգնելով սկզբից հատուցին բաժանորդագին 1000 օրինակի, և նրանց հետեւեցին ուրիշները.

Յ Ա Ն Ք

երես

Վարչամի համառօտ կենսագրութիւնը արտատպած	
Հայ աշուղներից . . . . .	3
Այսօր սիրուհին վարդ ու մանուշակ տուեց ինձի . . . . .	9
Նագելի կոյս ո՛վ, որ տեսնի պտտկերդ . . . . .	10
Քո, սիրով վառուած եմ ինձի մի տայ կրակ սիրուն կոյս . . . . .	11
Ես, թնչպէս չըսիրեմ քեզ, որ սրտով սիրական դու ես . . . . .	12
Արեւելքիցը մինչի արեւմուտ չըկայ քեզ նման անուշ սիրական . . . . .	13
Իմ երազս, այդ գիշեր իմ երազում տեսածս տերարանը . . . . .	15
Ո՛ւրես, արդեօք ո՛ւրես անուշ սիրական . . . . .	18
Սիրուն սոխակ սիրահար . . . . . , . . . .	19
Ժլատը . . . . .	23
Ո՛հ, փառք այն աւուր հազար երանի . . . . .	24
Հոգի ջան լաւ իմանաս . . . . .	25
Պանդուխտ սասունցու . . . . .	26
Գուշա, սիրուհին ապրում է վատ . . . . .	27
Ողբ աւերակ պարտեզին . . . . . , . . . .	29
Զեփիւռ . . . . .	32
Հայրենի կալքս հիմա ո՛ւմնից ուզեմ . . . . .	33
Իմ գանգատս . . . . .	34
Ինչ սրտում, որ սէր չըլինի, և յոյս ու հաւատ չի լինի . . . . .	35
Ա՛խ, թնչ անեմ ես . . . . .	37
Անիրաւ անբախտութիւն . . . . .	38

Երես

Փոքրիկ Գարեգին զօրանաս . . . . . 40  
 Անունդ չեմ լիշում սիրուն նազելի . . . . . 42  
 Կոյս իմ սիրունհին բնական Աստուած վկայ դու ես . . . . . 43  
 Գուշայ, քանի ասրի է տեսել չեմ . . . . . 44  
 Այրի կնոջ ձայն տալը որդուն. զարթիր մի քնիր սիրելիս . . . . . 46  
 Թող մնայ իմս ու քսկդ . . . . . 48  
 Ով է մեղաւոր . . . . . 49  
 Հեռացէք ով ամպեր . . . . . 51  
 Գարձեալ ասում են անհոգ գիւղացի . . . . . 52  
 Հանելուկ . . . . . 54  
 Որ ծարաւեն, որ ես արբեցրի ջուր . . . . . 55  
 Հայրիկի հաստատութեան առիթով . . . . . 56  
 Թասնիֆ, ո՛ւր է արդեօք սիրականս . . . . . 58  
 Մի օր տեսայ դաշտի մէջ, մի քանի գառան հովիւ . . . . . 60  
 Ամենակալ Արարիչ Աստուած փոթա ինձ օգնելու . . . . . 62  
 Գուշայ. սիրուն նազելի ով որ լինի քեզ սիրահար . . . . . 63  
 Հայ տղայ լուր աղաղակս . . . . . 65  
 Առատաձեռ մարզն ու ժլատ հարուստը . . . . . 66  
 Գովեստ գերապատիւ Ա. Մանթաշեանի . . . . . 72  
 Մանթարահ գիււանի, սիրունհի թէ անունդ տամ . . . . . 73  
 Թլիկի երգը . . . . . 75  
 Թիֆլիսում պատահեցին մի երկու հայ պատանիք . . . . . 76  
 Գնա դրգոյկ գնա շուտով . . . . . 79

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Ս խ ա լ	Ո լ ղ ի ղ	Երես	Տող
աշողջ	աշուղ	10	15
բհեզ	բեհեզ	11	9
թէ, կին թէ որ այր	թէ կին թէ այր	12	5
էնի	էնչ	12	13
Վարշամ	Վարշամս	13	24
Ալս	Այս	15	1
շորս	չորս	16	10
սպեղանիս	սպեղանի	18	4
գիմայ	հիմայ	19	10
անդտդար	անդադար	22	4
գորբոց	գործոց	24	12
հայ	հայի	26	16
պարտող	պարտեզ	29	14
պահահանդ	պահապանդ	30	19
Տրդատեանձս	Տրդատեանցս	31	4
խելացին	խլեցին	34	3
հայերս	հայրս	34	7
անուշեկ	անուշիկ	42	5
անմես է	անմեղ է	44	16
տուէքի	տուէք	45	3
Չէ,	Չէ,	46	15
Թոյլ տալով խղկիդ	Թոյլ, տալով խղճիդ	48	8
մահիճ	մահիէ,	52	9
սրբցրի	արբցրի	55	1

Page	Number	Text	Text
10	10	...	...
10	11	...	...
10	12	...	...
13	13	...	...
24	14	...	...
1	15	...	...
10	16	...	...
1	17	...	...
10	18	...	...
1	19	...	...
1	20	...	...
1	21	...	...
1	22	...	...
1	23	...	...
1	24	...	...
1	25	...	...
1	26	...	...
1	27	...	...
1	28	...	...
1	29	...	...
1	30	...	...
1	31	...	...
1	32	...	...
1	33	...	...
1	34	...	...
1	35	...	...
1	36	...	...
1	37	...	...
1	38	...	...
1	39	...	...
1	40	...	...
1	41	...	...
1	42	...	...
1	43	...	...
1	44	...	...
1	45	...	...
1	46	...	...
1	47	...	...
1	48	...	...
1	49	...	...
1	50	...	...



Faint, illegible text impressions, likely bleed-through from the reverse side of the page.

Additional faint, illegible text impressions, likely bleed-through from the reverse side of the page.

